

ԱՐՏԱՇԵՍ II-Ի ՏԱՐԵԹՈՒԱԿԻՐ ՊՂՆՁԷ ԴՐԱՄԸ՝ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ՊՈՄՊԷՆՍԵԱՆ ՏՈՄԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՒՍ ՄԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ռուբեն Վարդանեան

Վերջերս Մ. Զարդարեանը հրատարակեց 1985 թուականին հին Արտաշատի պեղումներից յայտնաբերուած երկու պղնձէ դրամներ՝ դրանք իրաւացիօրէն վերագրելով Արտաշէս II-ին (Ք.ա. 30-20 թթ.)¹: Ահա դրանց նկարագրութիւնները.

1. Ա կողմ. Արքայի գլուխը աջ, կարճ մօրուքով, թագը, որի գագաթի ելուստներից երեւում են երեքը, զարդարուած է ութ ճառագայթներ ունեցող խոշոր աստղով, ունի միայն վզկալ, ապարօշը եւ գլխի հետեւում նրա ժապաւէնները պատկերուած են երկու գծով: Նօսը կէտաւոր շրջանակ:

Բ կողմ. Ամաթեղջիւր, պոչը՝ ձախ, ժապաւէնազարդ: Գրութիւնը՝ ΒΑΣΙΛΕΩΣ ↓ աջից, ΑΡΤΑΣΕΡΞ ↓ ձախից, արտաքին աջ դաշտում՝ ԸΛ, արտաքին ձախ դաշտում՝ ΧΡ (կամ Χ[B]):

Կշիւր՝ 3.84 գ, տրամագիծը՝ 17.3 մմ, առանցքային յարաբերութիւնը՝ 12:

ՀՊՊԹ, համ. 19878/49: Լուսանկար 1:

2. Ա կողմ. Արքայի գլուխը աջ, կարճ մօրուքով, թագը՝ գագաթին հինգ ելուստներով, զարդարուած է աստղով, ունի միայն վզկալ: Նօսը կէտաւոր շրջանակ:

Բ կողմ. Խաղողի ողկոյզ²:

Կշիւր՝ 1.75 գ, տրամագիծը՝ 12.1 մմ, առանցքային յարաբերութիւնը՝ 12:

ՀՊՊԹ, համ. 19878/54: Լուսանկար 2:

Առաջին դրամի վրայ յստակ կարդացւում է Արտաքսերքս[էս] անունը: Դրամն իր արտաքին բոլոր յատկանիշներով հելլենիստական է եւ չի կարող թուագրուել աւելի ուշ, քան Ք.ա. I դարի վերջը: Տիգրան Մեծից յետոյ, որը սկիզբ դրեց դրամահատմանը Հայաստանում,

նում, Արտաշէս II-ից բացի մենք այլ արքայ չգիտենք, որը կարող էր թողարկած լինել այս դրամը, թէեւ նրա անունը հին հեղինակների մօտ յիշատակուած է ոչ թէ Արտաքսերքսէս, այլ Արտաքսիաս կամ Արտաքսէս ձեւերով³: Այսպիսով, այժմ մենք արդէն կարող ենք վստահօրէն պատկերել, որ Արտաշէս II-ը եւս դրամներ է թողարկել, եւ դրանցից երկու նմոյշներ մեզ յայտնի են⁴: Առաջին դրամն ուշագրաւ է նաեւ նրանով, որ նրա վրայ նշուած է թողարկման տարեթիւը եւ, ամենայն հաւանականութեամբ, նաեւ դրամի արժէքափը: Դրամի արտաքին աջ դաշտում տեղադրուած ԸԼ տառերն այլ բան չեն կարող նշանակել, քան աջից ձախ ընթերցուող թուական՝ ԸԼ = 36⁵: Սա չի կարող լինել արքայի գահակալման 36-րդ տարին, քանի որ Արտաշէս II-ը իշխել է ընդամենը 10-11 տարի, հետեւաբար այն ինչ-որ տոմարով արտայայտուած տարեթիւ է: Այս փաստը մեզ յուշեց կրկին անդրադառնալ տարիներ առաջ Արտաշատի քաղաքային պղնձէ դրամների թուագրման վերաբերեալ առաջարկած մեր վարկածին⁶, ըստ որի այդ դրամների վրայ ΖΞ եւ ΘΞ տառերը, թողարկման տարեթուեր լինելով, վերագրուած են մի տոմարի, որի սկիզբը կարող է եղած լինել Ք.ա. 66 թուականը՝ Պոմպէոս Մեծի եւ Տիգրան Մեծի միջեւ Արտաշատում յաշտութեան պայմանագրի կնքման տարեթիւը, որով Տիգրանը պահպանում էր իր իշխանութիւնը Պոմպէոսի հետ համաձայնեցրած սահմաններում ու ճանաչուած «հռոմէական ժողովրդի դաշնակից եւ բարեկամ»: Այս ելակէտից հաշուած՝ ար-

տաշատեան թողարկումներից մէկը թուագրուած է Ք.յ. 1/2 թ., իսկ միւսը՝ Ք.յ. 3/4 թ.⁷: Նոյն Ք.ա. 66 թուականից հաշուած, 36 թիւը կը համապատասխանի Ք.ա. 31/0 թ., այսինքն՝ Արտաշէս II-ի գահակալման առաջին տարուան, որը եւս մի լրացուցիչ փաստարկ է դրամը այդ արքային պատկանելու, ինչպէս նաեւ Արտաշատ քաղաքում պոմպէոսեան տոմարի կիրառման օգտին:

Ք.ա. 66 թուականին Մանլիոսի օրէնքով Միհրդատ Պոնտացու դէմ պատերազմ վարելու լիազօրութիւնը սենատի կողմից յանձնուած է Գնէոս Պոմպէոսին: Յաղթելով եւ դուրս մղելով Միհրդատին Պոնտական թագաւորութեան սահմաններից՝ Պոմպէոսի զօրքը մտնում է Հայաստան եւ շարժուած դէպի Արտաշատ: Տիգրանը, որը մինչ այդ արդէն կապերը խզել էր իր նախկին դաշնակցի ու անբող հետ, կամովին ներկայանում է Պոմպէոսի ճամբարը եւ նրանից վերստանում իր թագը՝ վերահաստատելով Հայաստանի թագաւոր: Ք.ա. 66 թ. Արտաշատում կնքուած պայմանագրով Տիգրանը կորցնում է Փիւնիկիան, Ասորիքը եւ էլի մի քանի շրջաններ՝ դրա փոխարէն պահպանելով իր իշխանութիւնը՝ հռոմէական զօրավարի կողմից «արքայից արքայ» տիտղոսի ճանաչմամբ, ստանալով նաեւ «հռոմէական ժողովրդի դաշնակից եւ բարեկամ» լինելու իրաւունքն ու պարտաւորութիւնը⁸: Միւս կողմից, նոյն այդ պայմանագրով իրաւաբանօրէն արձանագրուած էր Արեւելքում գերագոյն իշխանութեան անցումը Տիգրանից Պոմպէոսին⁹: 66 թ. աշունից մինչեւ 64 թ. գարունը Պոմպէոսը զբաղուած էր Միհրդատը Պոմպէոսի ակաւորելու հետապնդմամբ, իւրապատրի ապարդիւն հետապնդմամբ, իրենցից եւ աղուանների դէմ պատերազմների եւ աղուանների դէմ պատերազմելով եւ Պոնտոսի վերջնական նուաճմանը կը փոփոխութիւնից կախուած: Այստեղ արժէ փոքր-ինչ շեղուել ու ներկայացնել ու-

տորիք: Այստեղ Պոմպէոսը չի ճանաչուած Լուկուլլոսի կողմից վերականգնուած սելեւեան Անտիոքոս XIII-ի իշխանութեան օրինականութիւնը՝ Ասորիքը դիտելով որպէս նախկինում Տիգրանին պատկանած երկիր¹⁰: Ահա այդ ժամանակից սկսած՝ Սիրիայի եւ Փիւնիկիայի մի շարք քաղաքների համայնքներ սկսում են նոր թուականութիւն, որն արտացոլուած է, մասնաւորապէս, նրանց կողմից հատած դրամների թողարկման տարեթուերում: Պէտք է ենթադրել, որ նոր տոմարը Հայաստանում կարող էր սկսուել Ք.ա. 66 թուականի աշունից, երբ Տիգրանը յանձնուեց Պոմպէոսի ողորմածութեանը Արտաշատի մատոյցներում: Պոմպէոսն Ասորիքն օրինականօրէն ձեռք բերեց այդ պահից սկսած եւ այդ օրն է, որ վերջ դրուեց Ասորիքի թագաւորական տոմարին: Հէնց սա է նկատի ունեցել Յուստինոսը, երբ գրել է, որ «Այսպիսով, սիրիական գահին կանչուած լինելով, նա (Տիգրանը) տասնեօթ տարուայ ընթացքում իշխեց լիովին անվրդով» (Just. XL, 1), այսինքն՝ Ք.ա. 83-ից մինչեւ 66 թ.¹¹:

Ամենուր չէ, սակայն, որ պոմպէոսեան տոմարը հաշուել է 66 թուականից: Երբեմն քաղաքային համայնքը նոր տոմար սկսելու որոշումն ընդունում էր ի նշանաւորումն Պոմպէոսի կողմից քաղաքին շնորհած ինքնավարութեան կամ այլ թողարկման տարեթուերը բացայայտում են նաեւ նոյն քաղաքում տարբեր թուագրութիւնների կիրառման փոփոխականութիւնը՝ քաղաքական իրադրութեան փոփոխութիւնից կախուած: Այստեղ արժէ փոքր-ինչ շեղուել ու ներկայացնել ու-

տոնիտի թողած հոսման հարցերի եւ Ատրպատականի արքայ Արտաշատի դէմ, պարթեւների օգնութեամբ Ք.ա. 31/0 թ. իր իշխանութիւնը Հայաստանում հաստատելով, անմիջապէս դրամ է թողարկել եւ դա ձեռնարկել է, ըստ երեւոյթին, առաջին հերթին քաղաքական նկատառումներով՝ հռչակելու համար օրինական իշխանութեան վերականգնումը եւ ակնարկելով Պոմպէոսի հետ Տիգրան Մեծի կնքած դաշինքը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Մ. Զարդարեան, Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից, Արտաշէս Բ, Դրամաշրջանառութիւնը Հայաստանում. Հանրապետական գիտական նստաշրջան, 21 նոյեմբերի. Չեկուցումների թեզիսներ, Երեւան, 1998, էջ 5-7, նոյնի Արտաշէս Բ-ի անդրաձայն դրամները եւ պատմադրամագիտական դրամագներ վերջին Արտաշէսեանների ժամանակաշրջանից, Դրամագիտական հետազոտութիւններ, Երեւան, 2000, էջ 6-11:
- 2 Երկրորդ դրամի վրայ գրութիւն չի երևում. եթէ այն եղել է Բ կողմի կնիքի վրայ, ապա դուրս է մնացել շատ փոքրիկ հատաձոյի սահմաններից: Դրամը վերագրում է Արտաշէս II-ին՝ Ա կողմում արքայի դիմապատկերի պատկերագրական եւ ոճական ընդհանրութիւններից ելնելով:
- 3 Այս մասին տե՛ս Ռ. Վարդանեան, Թորինուս արծաթէ դրամ «Աստուածային Արտաքսերքսի» անուամբ, ՊԲՀ 1 (1999), էջ 324, ծնթ. 9:
- 4 Մինչ այս դրամի յայտնուելը Արտաշէս II-ին վերագրում էին այլ պատկերագրութեան պղնձէ դրամներ, որոնց վրայ, սակայն, ոչ մի տեղ նրա անունը որոշակիօրէն չէր ընթերցւում. տե՛ս P. Z. Bedoukian, *Coinage of the Artaxiads of Armenia*, London, 1978, pp. 29, 70, no 136, Խ. Մուշեղեան, Դրամական շրջանառութիւնը Հայաստանում (Ք.ա. V դ. - Ք.յ. XIV դ.), Երեւան, 1983, էջ 57, թիւ 48, Y. T. Necessian, *Armenian Coins and Their Values*, Los Angeles, 1995, p. 77, no. 139 եւ այլն: Վերջերս ի յայտ են եկել նաեւ արծաթէ դրամներ, որոնք վերագրում են կա՛մ Արտաշէս II-ին (A. Ronde, H. Torossian, *Une drachme inédite (?) d'Artaxes, roi d'Arménie (30-20 av. J.-C.)*, Bulletin de la Société Française de Numismatique, vol. 52 (1977), no. 2, pp. 25-26; Y. T. Necessian, *A Silver Coin of Artaxias II (30-20 B.C.)*, Armenian Numismatic Studies, vol. XXIV (1998), no. 3, pp. 29-31), կա՛մ Արտաշէս III-ին (Լ. Ա. Սարեան, Արտաշէս III-ին վերագրուող նոր արծաթէ դրամ, ՊԲՀ, 3 (1998), էջ 155-162): Դրանց կեղծ

լինելու մասին իմ տեսակէտը տե՛ս Ռ. Վարդանեան, Թորինուս արծաթէ դրամ...:

- 5 Մ. Զարդարեան, Արտաշէս Բ-ի անդրաձայն դրամները..., էջ 9-10: ՀԱ-որպէս թիւ ընդունելով՝ Մ. Զարդարեանը բացատրում է այն տարբերի համարելու հնարաւորութիւնը: Կապ տեսնելով այս դրամի եւ Տիգրան Մեծի արծաթների վրայ եղած թուների միջեւ՝ դրանք համարում է «տեխնիկական մեծագրեր»: Մինչդէռ այդ թուները, որոնք հանդիպում են միայն Տիգրան Մեծի «արքայից արքայ» տիտղոսով դրամների եւ տետրադրամների վրայ, շատ լաւ մեկնաբանում են որպէս տարբերութիւն՝ ե՛ր դրամագիտական, ե՛ւ պատմագիտական տեսանկիւնից, տե՛ս R. Vardanian, *Le titre de "roi des rois" dans les relations entre les Parthes, l'Arménie et Rome* in: Roma-Armenia (Grande Salle Sixtine, Bibliothèque Apostolique du Vatican, 25 mars-16 juillet 1999), 43-47, P. Варданян, «Великий царь царей Фарнак, Боспорский город Нимфей: новые исследования и материалы и вопросы изучения античных городов Северного Причерноморья, Санкт-Петербург, 1999, 14-17.
- 6 P. Варданян, *К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи*, ՊԲՀ, 2 (1987), էջ 201-207:
- 7 Այդ տարիներին Արտաշատի քաղաքային դրամների թողարկման պատմական հնարաւոր մեկնաբանութիւնը տրուած է վերոյիշեալ յօդուածում:
- 8 R. Vardanian, *Le titre de «roi des rois» dans les relations entre les Parthes, l'Arménie et Rome*, in: Roma-Armenia (Grande Salle Sixtine, Bibliothèque Apostolique du Vatican, 25 mars-16 juillet 1999), 43-47.
- 9 H. Seyrig, *Antiquités syriennes. Sur les ères de quelques villes de Syrie*, Syria 27 (1950), p. 11, 19.
- 10 H. Seyrig, op. cit., որտեղ նա լղում է J. Dobias, *Archiv Orientalny*, III, 1931, p. 240.
- 11 Մինչդէռ Ապպիանոսը յիշատակում է Սիրիայում Տիգրանի փաստացի կառավարման տարիների քանակը՝ 14 տարի, այսինքն՝ մինչեւ 69 թ. Ք.ա. App., Syr., 70.
- 12 Մինչեւ Ք.ա. 69 թ. Անտիոքի քաղաքային բրոնզէ թողարկումներում կիրառւում էր սելեւկեան տոմարը: Այդ տարում Լուկուլլոսի գալստով քաղաքային դրամների հատումը դադարեցւում է եւ վերսկսւում է միայն 64 թ., երբ Պոմպէոսը ժամանում է Անտիոք եւ, հաւանաբար, վերստին արտօնում դրամաթողարկումը: Փարսալի ճակատամարտից (Ք. ա. 48 թ. յունիսի 6)՝ Պոմպէոսի նկատմամբ Յուլիոս Կեսարի տարած յաղթանակից յետոյ 48/7 թուականից մինչեւ Ք.ա. 19/8 թ. թողարկուած դրամների վրայ անտիոքցիները տարբերիչ նշում էին արդէն կեսարեան տոմարով: Այնուհետեւ, Ք.ա 7/6-ից սկսած, Անտիոքում հատուած դրամների վրայ թողարկման տա-

րեթիւր յիշատակում էր Ակտիումի տոմարով՝ ի նշան Ք.ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին Մարկոս Անտոնիոսի նկատմամբ Օգոստոս Օկտավիանոսի տարած յաղթանակի: Տե՛ս Seyrig, op. cit., p. 15-20.

- 13 Ապամէա քաղաքը սկսել է բրոնզէ դրամներ թողարկել Ք. ա. 76/5 թուականից՝ սելեւկեան տոմարով թուագրուած (մինչեւ 68/7 թ. Ք. ա.): Դրամաթողարկման արտօնութիւնը քաղաքը կարող էր ստացած լինել Տիգրանից, որն այդ ժամանակ իշխում էր Սիրիայում: Լուկուլլոսի կողմից ճանաչուած Անտիոքոս XIII-ը Ապամէային, ըստ երեւոյթին, գրկում է այդ իրաւունքից, բայց քաղաքը վերստին ստանում է այն պոմպէոսեան տոմարի եօթերորդ տարում, որով եւ թուագրուած են նոր սերիայի առաջին թողարկումները: Ք.ա. 38/7-14/5 թթ. ընթացքում Ապամէայի դրամները կրկին թուագրուած են սելեւկեան տոմարով: Ապամէան, ի տարբերութիւն Անտիոքի, չի գործածել Ակտիումի տոմարը, բայց շատ կարճատեւ՝ 41-39 թթ., կիրառել է Անտոնիոսի կողմից քաղաքին ինքնավարութիւն շնորհելու ատիթով հիմնուած տոմարը, իսկ Օգոստոսի դիմապատկերը կրող Ք. ա. 4/3 թ. մի թողարկում թուագրուած է նրա իշխանութեան 28-րդ տարով: Տե՛ս Seyrig, op. cit., p. 15-20.
- 14 Արեւտուսայի հին քաղաքատեղում յայտնաբերուած մի արձանագրութիւն եւ Դիադոմենիանոսի օրօք Ք.յ. 217/8 թ. այնտեղ թողարկուած մի դրամ թոյլ է տուել վերականգնել այդ քաղաքում տարբեր տոմարների օգտագործման յաջորդականութիւնը՝ սելեւկեան, պոմպէոսեան (շուրջ Ք.ա. 63 թուականից), կրկին սելեւկեան, ապա՝ Ակտիումի: Seyrig, op. cit., p. 20-21.
- 15 Տրիպոլիս քաղաքը մինչեւ Ք.ա. 105 թ. կիրառում էր սելեւկեան տոմարը: Ծուրջ 105/4 թ. Անտիոքոս IX-ից ստանալով ինքնավարութիւն՝ քաղաքը սկիզբ է դնում իր սեփական տոմարին, այն կիրառելով մինչեւ Ք.ա. 65/4 թ.: Ք.ա. 64/3-ից գործարկում է պոմպէոսեան տոմարը, 36-ին, Անտոնիոսի կողմից կլէոպատրային նոտիւնով, ընդունում է այդ թագուհու սիրիական տոմարը (սկիզբը՝ Ք. ա. 37/6 թ.), Ք. ա. 31 թ. Ակտիումի ճակատամարտից յետոյ Տրիպոլիսը վերջնականապէս վերադառնում է սելեւկեան տոմարին: Seyrig, op. cit., p. 38-43.
- 16 Seyrig, op. cit., p. 52, n. 2.
- 17 Ibid., p. 50-52.
- 18 Տե՛ս, օրինակ, D. R. Sear, *Greek Imperial Coins and their values. The Local Coinages of the Roman Empire*, London, 1982.
- 19 Արտաշատի քաղաքային դրամներից մեկի վրայ (P. Варданян, *К вопросу о датировке... стр. 201, ном. 1*). աջ դաշտում տեղադրուած ZH = 201, ном. 1) աջ դաշտում համապատասխանում է I տառը, իսկ միւս երկու թողարկումները վրայ (P. Варданян, *К вопросу о датировке... стр. 201, ном. 2*) աջ դաշտում տեղա-

դրուած ΘΞ = 69 տարեթիւն ձախ դաշտում համապատասխանում են IB տառերը: Ակնյայտ է, որ I եւ IB տառերը նոյնպէս թուական են նշանակում՝ 10 եւ 12: Ուրեմն, 67-ին համապատասխանում է 10-ը, իսկ 69-ին՝ 12-ը, այսինքն՝ երկու դեպքում էլ տարբերութիւնը 2 է: Այստեղից կարելի է ենթադրել, որ նոյն դրամը թուագրուած է երկու տարբեր տոմարներով: Այս միտքն առաջին անգամ յայտնել է Ռ. Գեորջը՝ ենթադրելով, թէ ձախ դաշտում նշուածները կարող են որեւէ արքայի կառավարման տարեթուներ լինել, որոնք, այնուհետեւ, Մ. Լ. Շոմոնը փորձել է վերագրել Տիգրան II-ին՝ միեւնոյն ժամանակ աջ դաշտի տառերը համարելով իբր Ք. ա. 154 կամ 153 թ. սկիզբ առած արտաշատեան տոմարով արտապատուած տարեթուներ (M. L. Chaumont, *A propos d'une ère d'Artaxata, capitale de la Grande Arménie*, Revue des Etudes Arméniennes 18 (1984), pp. 405-406; այս վարկածի քննադատութիւնը տե՛ս P. Варданян, *К вопросу о датировке... стр. 202-204*):

Յայտնի են դրամական նոյն թողարկումը երկու տարբեր տոմարներով թուագրելու դեպքեր (տե՛ս, օրինակ, H. Seyrig, op. cit., p. 42): Ասելին՝ Ա. Սելիզը յիշատակում է եռակի թուագրմամբ կշռաքարեր, որոնցից մեկի վրայ, ի դէպ, Սեպտիմիոս Սելեւոսի կողմից Լատիկէա քաղաքին «մետրոպոլիս» տիտղոսի շնորհման կապակցութեամբ հիմնուած տոմարով տարբեր կայ (H. Seyrig, op. cit., p. 31): I եւ IB տարեթուները չե՛ն կարող արդեօք նոյնպէս վերաբերել մի տոմարի, որը սկիզբ է առել Արտաշատին «մետրոպոլիս» (քաղաքամայր) տիտղոսի շնորհման պահից, այնպէս, ինչպէս Լատիկէա քաղաքի համապատասխան տոմարը: Եթէ դրամներից մեկը թողարկուած է Ք.յ. 1/2 թ., իսկ միւս երկուսը՝ Ք.յ. 3/4 թ., ապա Արտաշատի ենթադրեալ քաղաքային տոմարի սկիզբը կլինի Ք. ա. 9/8 թ., այսինքն՝ Տիգրան IV-ի թագադրման տարին: Վերջինս, սակայն, իշխել է շուրջ 10 տարի՝ սպանուելով Ք.յ. 1 թուականին «քարքարուների դէմ մղած ինչ-որ պատերազմում» (Dio, LV, 10a, 5), հետեւաբար 12-ը չի կարող վերաբերուել նրան, քանի որ Ք.յ. 3/4 թուականին այդ արքան այնու կենդանի չէր: Ուստի մնում է պաշտպանել վերն առաջարկուած մեր ենթադրութիւնը Արտաշատի քաղաքային տոմարի հաստատման մասին: Իսկ «մետրոպոլիս» տիտղոսը քաղաքին կարող էր շնորհած լինել հենց Տիգրան IV-ը իր թագադրման տարում:

I-ն եւ IB-ն որպէս 10 եւ 12-րդ ամիսներ մեկնաբանելու է. Բաբելոնի առաջարկութիւնը (E. Babelon, *Melanges Numismatique*, Paris, 1912, pp. 293-303), որն ընդունուել է այլ հեղինակների կողմից (Ջ. Պտուկեան, *Հայաստանի վերաբերեալ հոմեթական դրամներ եւ մեդալիոններ*, Վիեննա, 1971, էջ 193-194, Խ. Մուշեղեան, *Դրամական շրջանառութիւնը...*, էջ 109), հաւանական

չէ: Յունահռոմէական դարաշրջանի դրամների վրայ թողարկման ամիսը շատ հազուադէպ էր նշում: Ամիսների մակերոնական անուանումները՝ ամբողջութեամբ կամ կրճատ ձեռով, կանոնաւոր կերպով նշում էին Տիգրիսի Սելեւկիայում հատուած պարթեական տետրադրամների վրայ՝ Որոդէս II-ից (57-38 Ք.ա.) սկսած. **D. G. Sellwood**, *An Introduction to the Coinage of Parthia*, London, 1980, type 45 եւ այլն, եւ Գոտարզ II-ի (40-51 Ք.ա.) որոշ բրոնզէ թողարկումների վրայ. **D. G. Sellwood**, *An Introduction ...*, type 65. 38-45: Թուական նշանակող տատերով (A-ից մինչեւ M կամ N) ամիսները նշում են նաեւ Աթենքի «նոր ոճի» տետրադրամների վրայ (Ք.ա. III դ. վերջ - I դ. վերջ) (**B. Head**, *Historia Numorum*, Oxford, 1911, p. 379): Երկու դէպքում էլ, սակայն, վերահսկման այդ միջոցին դիմելու անհրաժեշտութիւնը ծագել է ինտենսիւ դրամաթողարկման պատճառով, երբ դրամ էին հատում ոչ թէ դէպքից դէպք կամ, նոյնիսկ, տարին մէկ անգամ, այլ տարուայ մէջ գրեթէ ամէն ամիս եւ մեծ քանակութեամբ, ինչը չի կարելի ասել Արտաշատի թողարկումների մասին՝ ելնելով մեր ունեցած տուեալներից:

20 Σ (կամ Ξ, E) տառի առկայութիւնը XP-ի աջ կողմում, ինչի մասին նշում է Մ. Զարդարեանը (*Արտաշէս Բ-ի անդրանիկ դրամները...*, էջ 9), թէն չի բացառում, բայց առայժմ հարցականի տակ է:

21 Տե՛ս, օրինակ, *Sylloge Numorum Graecorum Italia, Milano Civiche Raccolte Numismatiche 12/1* (Seleucides - Chalcidice), Milano, 1992, p. 46, no. 156, դիմերեսին, Անտիոքոս IV արքայի գլխի ֆետետում՝ (երկու խալկոս), p. 52, no. 197, դիմերեսին, նոյն արքայի գլխի լետետում՝ (մէկ խալկոս): Տե՛ս նաեւ Babelon, E., *Traité des monnaies grecques et romaines*, I partie, Théorie et doctrine, tome I, Paris, 1901, p. 462-465.

22 Տե՛ս, օրինակ, **D. G. Sellwood**, *An Introduction...*, p. 40, types 12.14, 12.15, 12.17, որտեղ դիմերեսին, Միհրդատ I արքայի գլխի լետետում, կան «երկու խալկոս» նշանակող տատերը:

23 Օրոլի եւ խալկոսի արժէքային յարաբերութիւնը կարող էր անելի մեծ լինել՝ հասնելով 1:12-16-ի, տե՛ս, օր., Babelon, E., օր. cit, p. 462; **Х. Фенглер, Г. Гироу, В. Унгер, Словарь нумизмата**, Москва, 1993, ст. 351:

24 **K. Schmitt-Korte, M. Price**, *Nabatean Coinage — Part III. The Nabatean Monetary System, Numismatic Chronicle* 156 (1996), p. 121.

25 **Ռ. Վարդանեան**, *Դիտողութիւններ Տիգրան Մեծի բրոնզէ թողարկումների չափագիտութեան եւ ժամանակագրութեան վերաբերեալ*, Գիտական նստաշրջան «Հայոց պատմութեան եւ մշակութի հարցեր» նուիրում Ալեք Մանուկեանի յիշատակին, զեկուցումների հիմնադրոյթներ, Երեւան, 1997, էջ 8-10:

26 Dio, XLIX, 39,6.

A DATED COPPER COIN OF ARTASHES II — JUST ONE MORE EVIDENCE ABOUT THE USE OF THE POMPEAN ERA IN ARTASHAT

Ruben Vardanyan
Summary

One of the two copper coins, found at the excavations of ancient Artashat in 1985, bears a date (CA = 36) on the Reverse side, in the outer right field (Rev.: cornucopia, leg. ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΣΕΡΕΣ weight 3.84 g, diam. 17.3 mm, axis 12). This coin, with the dated municipal ones of Artashat, testifies that a new era came into use in 66 B. C., the year when the peace treaty was signed between Pompey and Tigranes II, according to which Tigranes preserved his power on the territory, agreed to this treaty frontiers, and was proclaimed "the ally and the friend of the Roman people". The year 36 of Pompean era corresponds to 31/0 B. C., that is to say the year of establishment of his authority in Armenia by

Artashes II, after several years of struggle against the Atropatenian king Artavasdes and the Roman troops, retained in the country by Antony. Dated Pompean era coins were implying the interallied treaty, signed by Pompey and Tigranes the Great, grandfather of Artashes II, and indicate the continuation of the legitimate power in Armenia.

On the Reverse of the same coin, in the outer left field, one can see the letters CR which may be deciphered as CB, signifying "two chalkoi".

The idea of the existence of the Artashat municipal era is suggested proceeding from the assumption that in 9 or 8 B. C. the city was awarded the title "metropolis".

Արտաշէս II-ի պղնձէ դրամները

